«Մետաղ-դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01239878) 2011 թվականի օգոստոսի 15-ին կնքված՝ N 31 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի համար մետաղական ցանկապատի պատրաստում և տեղադրում՝ 450000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 805 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 3/3.8-1/84834-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N ԱԱ/3-4/6567-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հորիզոն - 95» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2011 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N CC-11-08-001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտաքին ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքների իրականացում՝ 8006440 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-806-Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N Մ-438-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N3/3.8-2/84870-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N ՀՔ/22/8701-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 19-ի N ԱԱ//3-6/6640-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի «Հայ բժիշկներ» միության կողմից «Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով Նիդերլանդներից ստացված բեռը (դեղ՝ «Sodium valproate 150 mg», 3 արկղ, 32 կգ ընդհանուր քաշով, 5200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 450 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի «Էպիլեպսիայով հիվանդ երեխաների արտագնա զննում, գործիքային հետազոտություն, խորհրդատվություն և բուժման օպտիմալացում» ծրագրի մասին» N Մ- 438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 807-Ա**
**քաղ. Երևան**

**«ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-2/84588-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 14-ի N ՖԲ/ԱնՄ-5/7492-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N ԱԱ/3-6/6481-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է .***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության քաղաքացի Մարիամ Ալբերտի Իգիթյանի կողմից «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված օգտագործված հագուստի (900 կգ ընդհանուր քաշով, 198 եվրո արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 500 եվրո, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է օգտագործել մանկատան երեխաների կարիքները հոգալու համար:

2. «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 808 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 3/3.8-1/84874-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 01/07-1/10730-11 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N ԱԱ/3-4/6725-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով Իրանի Իսլամական Հանրապետությունից «Իրանահայ» կազմակերպությունից ձեռք բերված դպրոցական տետրերի (40120 հատ, 2400 կգ ընդհանուր քաշով, 14844.40 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1100 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Տետրերն անհատույց հանձնվելու են Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությանը՝ քաղաքի դպրոցներին բաշխելու նպատակով (39100 հատ) և Երևանի խուլերի ծանր խանգարումներ ունեցող հատուկ կրթահամալիրին (1020 հատ):

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարանին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 809 - Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 29–ի N 3/3.8-2/85220-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N ԱԱ/3-6/ 6871-11 եզրակացությունները,* ***ո ր ո - շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված պլաստիկ կոշիկների (30 տեղ, 8097 հատ, 3720 կգ ընդհանուր քաշով, 121455 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 7500 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը անհատույց հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանը՝ բժշկական և սոցիալական հաստատություններին բաշխելու նպատակով:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 810 -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N Մ-571-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Մայր Աթոռ սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի 2011 թվականի օգոստոսի 23-ի N 1422 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 23 -ի N 3/3.8-1/85030-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի օգոստոսի 29-ի N ԱԱ/3-4/6074-11 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի օգոստոսի 14-ի Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Գևորգյան հոգևոր ճեմարանի 2-րդ մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-571-Ա որոշման (2011 թվականի ապրիլի 1-ի N Մ-191-Ա որոշման խմբագրությամբ) մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետում «489.324.120 դրամ» բառերը փոխարինել «510.622.220 դրամ» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «489.324.120 դրամ» բարերը փոխարինել «487.399.220 դրամ» բառերով:

2. Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 811 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-057-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)**

**(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-1/84559-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N ԱԱ/3-4/6462-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-057-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էդ.Էր.Սու» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00932261) 2011 թվականի օգոստոսի 31-ին կնքված՝ N WVA/ADPs & Projects/IT-11/006 (LOT 2 (01/CC), LOT 3 (01/CC)) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգիչների և հարակից սարքավորումների ձեռքբերում՝ 6830940 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 812 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N Մ-495-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 3/3.8-1/84832-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N ԱԱ/ 3/3-4/6569-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 09104402) կնքված ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագրի մասին» N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոլայթինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01545806) 2011 թվականի սեպտեմբերի 2-ին կնքված՝ N «ՋՍՏՋԱՀ-ՊԸ-02» պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական լամպերի մատակարարում՝ 4006302.75 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին և Ջերմուկի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 813 - Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-168-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՇԵՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-1/84577-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N ԱԱ/3-4/6460-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Օրգանական բանջարեղենի մշակության փորձացուցադրական ուսումնական կենտրոնի հիմնում» ծրագրի մասին» N Մ-168-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գարիկ Մնացականյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 43053135) 2011 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ցանկապատման աշխատանքների իրականացում՝ 3700000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 814 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆ, ԻՆԿ.» ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ) (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-1/84650-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N ԱԱ/3-4/6463-11 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N 01/13/2744-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 28-ի «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» ամերիկյան բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի մասին» N Մ-120-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Եվրոտրանս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02234324) 2011 թվականի օգոստոսի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքի մատակարարում՝ 106000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-** 815 **-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-501-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N 3/3.8-1/84421-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N ԱԱ/3-4/6413-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու մասնակի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-501-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ամստեր ֆլաուերս» հայ-հոլանդական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00250304) 2011 թվականի օգոստոսի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2000 հատ վարդի թփի ձեռքբերում՝ 1333340 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

**Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-816-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 3/3.8-1/84847-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N ԱԱ/3-4/6721-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալֆա Սիստեմ Տեքնոլոջիս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02586876) 2011 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված N 32 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նոր մասնաշենքի համար լրացուցիչ էլեկտրատեխնիկական աշխատանքներ՝ 621820 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-817-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-2/85171-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 27-ի N ՀՔ/22/8840-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 27-ի N ԱԱ/3-6/6828 -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Ամերիկյան Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված ախտահանիչ լուծույթները (3 տեղ, 706 կգ ընդհանուր քաշով, 11412.22 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1988 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 818 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ-153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 3/3.8-2/85221-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N ԱԱ/3-6/6862-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված էլեկտրական ջրատաքացուցիչներ (2 տեղ, 16 կգ ընդհանուր քաշով, 2150 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 100 եվրո, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-704-Ա, 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-059-Ա և 2011 թվականի հուլիսի 1-ի N Մ-523-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 819 -Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-029-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N 3.8-2/85172-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N ԱԱ/3-6/6771-11 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել, որ Իրանի Իսլամական Հանրապետությունից «Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամ հասցեով ստացված կոյուղաջրերի մաքրման կայանի սարքավորումը (20 տեղ, 680 կգ ընդհանուր քաշով, 9900 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, իսկ բեռնափոխադրման ծախսերը կազմում են 1500 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան Տ/Մ) ներմուծվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի «Արմենակ և Աննա Թաղէոսյանների անվամբ բուժարան» բարեգործական հիմնադրամ կողմից իրականացվող «Կոշ գյուղում պոլիկլինիկայի կառուցում» N Մ-029-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:
2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 820 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-2/85170-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 28-ի N ՀՔ/22/8916-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 27-ի N ԱԱ/3-6/6818-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայից Էլենորեն Շտիֆտունգ հիմնադրամի կողմից Ցյուրիխի մանկական համալսարանական հիվանդանոցի միջոցով «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված լսողական սարքերը, բաղադրիչները և կարգավորման սարքը (5 տեղ, 70 կգ ընդհանուր քաշով, 55821 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 650 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-821-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 17-ի N ՄՔ/15-1/8480-11 գրությունը, և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 3/3.8-1/84878-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N ԱԱ/3-4/6804 -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «ծրագրի ավարտը՝ 2011թ. օգոստոսի 31-ը» բառերը փոխարինել «ծրագրի ավարտը՝ 2011թ. նոյեմբերի 30-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 822-Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-774-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 27-ի N 3/3.8-1/85111-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 29-ի NԱԱ/3-4/6930-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավետիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նաթ Արքիթեքչուր Ստուդիո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01565913) 2011 թվականի սեպտեմբերի 13-ի պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծային աշխատանքների կատարում՝ 54180000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 823 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-566-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 3/3.8-1/85019-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N ԱԱ/3-4/6806-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 00057312) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարալիկ-համայնք» ծրագրի մասին» N Մ-566-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱՌԴԱ կոնտրակշն, թրեյդ ընդ թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2011 թվականի հուլիսի 9-ին կնքված՝ N Պ-09/07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ համայնքում համայնքային կենտրոնի կառուցապատման շինարարական աշխատանքներ՝ 42100000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԳՐԻՎԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04719504) 2011 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված՝ N Գ-15/09 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութի ձեռք բերում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 824 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N1)
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 3/3.8-1/84876-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N ԱԱ/3-4/6808-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 01245672) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

1) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2011 թվականի մայիսի 1-ին կնքված՝ N 003/20/04/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ինտերնետային ծառայությունների մատուցում՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Յուքոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2011 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N 098/01/08/2011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ինտերնետային ծառայությունների մատուցում և համակցման վճար՝ 16320000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 825 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-885-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-1/84573-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N ԱԱ/3-4/ 6461-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից իրականացվող «Պետության կարիքների համար տուբերկուլյոզով հիվանդների սոցիալական աջակցության ծառայություններ» ծրագրի մասին» N Մ-885-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «31 հուլիս 2011» բառերը փոխարինել «25 դեկտեմբեր 2011» բառերով:

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարոնյան 21, ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մանասե Ծառուկյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 22602005) 2011 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը նշված ապրանքների մատակարարում՝ 3837500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արտավազդ Ամրոյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 35052448) 2011 թվականի օգոստոսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում մինչև սույն

թվականի դեկտեմբերի 25-ը նշված ապրանքների մատակարարում՝ 1332520 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՍԻՍ Նատուրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04412776) 2011 թվականի օգոստոսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը նշված ապրանքների մատակարարում՝ 1887600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ - 826 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 17-ի N 3/3.8-1/84719-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 14-ի N ԱԱ/3-4/6503-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «RosettaStone» ընկերության հետ (Procter House, 1 Procter Street, London WC1V 6DW, United Kingdom) 2011 թվականի հուլիսի 29-ի N 297463 հաշիվ-ապրանքագրով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է համակարգչային ծրագրի արտոնագրի ձեռքբերում՝ 18181.25 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նիկօ ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00100623) 2011 թվականի օգոստոսի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փափուկ կահույքի ձեռքբերում՝ 1080000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սոլիդ մակերես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00865263) 2011 թվականի օգոստոսի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երկու համակարգչային աշխատասեղանի պատրաստում՝ 3034000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Սոլիդ մակերես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00865263) 2011 թվականի օգոստոսի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընդունարանի գրասեղանի պատրաստում՝ 3850000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Այ-Թի պլազա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244868) 2011 թվականի օգոստոսի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային սարքավորումների ձեռքբերում՝ 560000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-** 827 **-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-471-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈ-ԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐ-ԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N 3/3.8-1/84329-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԱ/3-4/6274-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի հանրային պուրակի բարեկարգում» ծրագրի մասին» N Մ-471-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «4200000 դրամ» բառերը փոխարինել «4362301 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «4200000 դրամ» բառերը փոխարինել «4362301 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հազարաշեն» արտադրական կոոպերատիվի (ՀՎՀՀ՝ 08400329) 2011 թվականի օգոստոսի 9-ին կնքված՝ N WVA/GAV ADP/CW-11/003 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պուրակի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 4362301 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 828 -Ա**
**քաղ. Երևան**

| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից նախագծի փորձաքննություն`` 800.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

Ա.14/1

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-843-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N Մ-317-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N 446 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N 3/3.8-1/84422-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N ԱԱ/3-4/6561-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի մասին» N Մ-317-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության (ՀՎՀՀ՝ 00006023) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի մասին» N Մ-317-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝



«Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02703411) 2011 թվականի օգոստոսի 31-ին կնքված՝ N Ա-56 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի աուդիտի իրականացում՝ 1720000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

Հայկական Կարմիր խաչի ընկերության

Գլխավոր քարտուղարի՝ Աննա Եղիազարյանի կողմից

«16» սեպտեմբեր 2011թ.

(Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում)

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարձրացնել տեղական համայնքների և կառույցների կարողությունը և նվազեցնել խոցելիությունը բնական աղետների ոլորտում՝ աջակցելով այն ռազմավարություններին, որոնք կնպաստեն նրանց պատրաստվածության մակարդակի բարձրացմանը, ռիսկի նվազեցմանը և աղետներին արձագանքմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Եվրոխորհուրդի մարդասիրական օգնությունների բաժինը Դանիական Կարմիր խաչի միջոցով |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ - Գյումրի, Առափի, Սառնաղբյուր, Անուշավան, Փանիկ, Մեծ Մանթաշ, Նոր Կյանք, Բենիամին, Ազատան և Պեմզաշեն քաղաքային և գյուղական համայնքներ:<br>Աղետների ռիսկի նվազեցման ոլորտում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 263.610 Եվրո - առանց ԱԱՀ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մար զ - Գյումրի, Առափի, Սառնաղբյուր, Անուշավան, Փանիկ, Մեծ Մանթաշ, Նոր Կյանք, Բենիամին, Ազատան և Պեմզաշեն քաղաքային և գյուղական համայնքների բնակչություն, մարզում գործող շահագրգիռ կազմակերպություններ: Համայնքների ընտրությունը կատարվել է Շիրակի մարզային իշխանության և մարզային Փրկարար ծառայության հետ համատեղ՝ հաշվի առնելով համայնքների՝ աղետների նկատմամբ ռիսկը, աղետների կրկնման հաճախականությունը և հարուցվող վնասները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ապրիլ 2010 –Օգոստոս 2011 – գործունեության իրականացում<br>01-30 սեպտեմբեր 2011 – աուդիտի իրականացում<br>Հոկտեմբեր – Նոյեմբեր 2011 – ֆինանսական և պատմողական հաշվետվությունների ներկայացում |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ չորս ուղղություններով՝ |



| | | |
|---|---|---|
| | | 1. Համայնքների կարողությունների զարգացում,<br>2. Դպրոցներում աղետներին նախապատրաստման ուսումնական ծրագրերի անցկացում,<br>3. Աղետների ոլորտում մարզային համակարգման հանձնաժողովի ստեղծում,<br>4. Հարավային Կովկասում աղետների կառավարման ոլորտում համագործակցության հզորացում:<br><br>Ծրագրի շրջանակներում ըստ ուղղությունների՝ նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝<br>1. Համայնքների կարողությունների զարգացում<br>1.1 Թիրախային 9 համայնքների՝ աղետների նկատմամբ խոցելիության և կարողությունների գնահատում, /բյուջեն 7750Եվրո/<br>1.2 Իրականացված գնահատման զեկույցի մշակում, վաղ ազդարարման համակարգի համայնքային մոդելի ստեղծում և համայնքների ռիսկային գոտիների քարտեզների կազմում, /բյուջեն 6273Եվրո/<br>1.3 Թիրախային 9 համայնքներում Աղետներին նախապատրաստման և կանխարգելման գործողությունների պլանի մշակում,<br>1.4 Թիրախային 9 համայնքներում աղետներին արձագանքման կամավորական թիմերի ձևավորում,<br>1.5 Համայնքային կամավորական թիմերի համար հատուկ դասընթացների և ուսումնական խաղ-վարժանքների կազմակերպում և մինիմալ սարքավորումներով ապահովում: /բյուջեն 101710Եվրո/<br>2. Դպրոցներում աղետներին նախապատրաստման ուսումնական ծրագրերի անցկացում<br>2.1 Ընտրված դպրոցների ուսուցիչների համար հատուկ դասընթացների կազմակերպում, /բյուջեն 16629Եվրո/<br>2.2 Շահառու դպրոցների համար տարբեր ուսումնական նյութերի մշակում, համակարգչային ձևավորում և տպագրում, /բյուջեն 55350Եվրո/<br>2.3 Դասընթացներին մասնակցած ուսուցիչների միջոցով դասընթաց-քննարկումների կազմակերպում իրենց իսկ դպրոցների բոլոր աշակերտների հետ, /բյուջեն 750Եվրո/<br>2.4 Երեխաների կողմից իրենց տներում ռիսկերի գնահատում, /բյուջեն 750Եվրո/<br>2.5 Ներ- և միջդպրոցական մրցույթների կազմակերպում, /բյուջեն 4000Եվրո/<br>2.6 Դեկտեմբերի 7-ին նվիրված միջոցառման կազմակերպում: /բյուջեն 1768Եվրո/<br>3. Աղետների ոլորտում մարզային համակարգման հանձնաժողովի ստեղծում<br>3.1 Մարզային գործընկերների քարտեզագրում, /բյուջեն 396Եվրո/ |

| | | |
|---|---|---|
| | | 3.2 Հանձնաժողովի ձևավորում,<br>3.3 Համածայն մշակված գործողությունների պլանի՝ եռամսյակային հանդիպումների անցկացում, /բյուջեն 3665Եվրո/<br>3.4 Մարզային կլոր սեղանների կազմակերպում՝ աղետների ռիսկի կառավարման հիմնահարցերի և դրա վերաբերյալ ՀՀ օրենսդրության մասին, /բյուջեն 1352Եվրո/<br>3.5 Ծրագրի մեկնարկին և ավարտին մամլո ասուլիսների կազմակերպում, /բյուջեն 990Եվրո/<br>3.6 Մարզային մակարդակում կլիմայի փոփոխության, աղետների ռիսկի նվազեցման և Հյոգոյի շրջանակային համաձայնագրի թեմաներով սեմինարների անցկացում: /բյուջեն 430Եվրո/<br>4. **Հարավային Կովկասում աղետների կառավարման ոլորտում համագործակցության հզորացում**<br>4.1 Տարածաշրջանային հանդիպումներ Վրաստանում, /բյուջեն 3706Եվրո/<br>4.2 Ազգային, մարզային և տեղական մակարդակներում ծրագրի միջանկյալ և ավարտական արդյունքների վերաբերյալ կլոր սեղանների կազմակերպում՝ փորձի փոխանակման նպատակով: /բյուջեն 11612Եվրո/ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի շրաջանակներում ձևավորված համայնքային թիմերի համար ձեռք է բերվելու համապատասխան գույք /սաղավարտ, պարան, անհատական հագուստ, ուսապարկ և այլն/, որի գումարը կազմում է 45.324 Եվրո: Տրամադրված գույքը հնարավորություն կընձեռի թիմերին օպերատիվ արձագանքելու տեղական արտակարգ իրավիճակներին: Բնակչության իրազեկման բարձրացման միջոցառումների իրականացման նպատակով տպագրվելու են մի շարք ուսումնական նյութեր /պաստառներ, բուկլետներ, ձեռնարկ և այլն/, որոնց գումարը կազմում է 54.250Եվրո: Ավելին, ծրագրի շրջանակներում նախատեսված հանդիպումները, դասընթացներն ու այլ նմանատիպ միջոցառումները իրականացնելու համար ձեռք են բերվելու գրենական պիտույքներ, սնունդ, ուսումնական վարժանքների համար՝ անհրաժեշտ պարագաներ /առաջին օգնության արկղ, կրակմարիչ և այլն/, վճարվելու է մասնակիցների համար գիշերավարձ և այլ ծախսեր, որոնք կատարվելու են ծրագրի բյուջեի շրջանակներում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 46.479 Եվրո, որը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ, ծրագրի աուդիտի ծախսը, գործունեության համար անհրաժեշտ մեքենաների պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, պրոյեկտորի, կապի և կոմունալ ծախսեր, գործուղման և այլ ծախսեր: |



| | | |
|---|---|---|
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է Շիրակի մարզպետարանի, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Շիրակի մարզային փրկարար ծառայության և Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության հյուսիսային ծառայության, ՀՀ Կրթության և գիտության նախարարության և նրա Շիրակի մարզային ստորաբաժանման, ինչպես նաև 9 թիրախային գյուղական համայնքների հետ սերտ համագործակցությամբ: Վերոնշյալ կառույցների, ինչպես նաև մարզում գործող այլ տեղական և միջազգային շահագրգիռ կազմակերպությունների հետ պատշաճ համագործակցություն և համակարգում ապահովելու նպատակով՝ ծրագրի շրջանակներում հիմնվելու է մարզային համակարգման հանձնաժողով, որը ղեկավարվելու է Շիրակի մարզային իշխանությունների, մարզային Փրկարար ծառայության և Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել ամսեկան, եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Դանիական Կարմիր խաչին և Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազագային Ֆեդերացիային, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր վերոնշյալ երկու գործընկերների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է Շիրակի մարզում իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը, ՀՀ Կրթության և գիտության նախարարությանը և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-844-Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-896-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 3/3.8-285008-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի N ՖԲ/ԱնՄ-4/7704-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 19 -ի N ԱԱ/3-6/6650-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ամերիկայի միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության հասցեով ուղարկված բեռը (144 տեղ, 5800 կգ ընդհանուր քաշով, 78100 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 5950 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, Շիրակի ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Աջակցություն անապահով ընտանիքներին» ծրագրի մասին» (2011 թվականի հունվարի 21-ի N Մ-007-Ա որոշման խմբագրությամբ) N Մ-896-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՍՏԱՑՎԵԼԻՔ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ
(Container No MSCU 3418562)

14/4.9

| Հ/Հ | Ստացող կազմակերպություն | Քանակ (արկղ, կգ, հատ, զույգ) | Արկղի պարունակություն | Ապրանքի անվանում | Միավորի արժեք $ | Ընդհանուր արժեք $ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Տիրամայր Հայաստանի Կենտրոն-Գյումրի (մոտ 350 շահառու) | 3 | 3 արկղ (54 զույգ) | կոշիկ | 9.3 | 500 |
| 2. | Տիրամայր Հայաստանի ճամբար (մոտ 300 շահառու) | 46 | 8 արկղ (800 զույգ) | գուլպա | 1.5 | 1200 |
| | | | 5 արկղ (150 հատ) | պայուսակ | 16.7 | 2500 |
| | | | 30 փաթեթ (9000 մետր) | անկողնային կտոր | 2.8 | 25000 |
| | | | 1 փաթեթ (3 հատ) | պահարան | 250 | 750 |
| | | | 1 փաթեթ (2 հատ) | մահճակալ մատրասով | 225 | 450 |
| | | | 1 փաթեթ (1 հատ) | կլոր սեղան | 200 | 200 |
| 3. | Զոհված ազատամարտիկի ընտանիք (մոտ 1400 շահառու) | 30 | 3 արկղ (90 հատ) | կիսաշրջազգեստ | 16.7 | 1503 |
| | | | 12 արկղ (432 հատ) | տաբատ | 12.1 | 5230 |
| | | | 10 արկղ (320 հատ) | սվիտր | 14.06 | 4500 |
| | | | 5 արկղ (600 հատ) | մայկա | 3.6 | 2160 |
| 4. | Կույրերի միավորում (մոտ 1400 շահառու) | 30 | 3 արկղ (90 հատ) | կիսաշրջազգեստ | 16.7 | 1503 |
| | | | 12 արկղ (432 հատ) | տաբատ | 12.1 | 5230 |
| | | | 10 արկղ (320 հատ) | սվիտր | 14.06 | 4500 |
| | | | 5 արկղ (600 հատ) | մայկա | 3.6 | 2160 |
| 5. | Գյումրու կարիքավոր ընտանիքներ (մոտ 1000 շահառու) | 35 | 13 արկղ (130 հատ) | բաճկոն | 84.6 | 11000 |
| | | | 8 արկղ (288 հատ) | տաբատ | 12.1 | 3486 |
| | | | 10 արկղ (320 հատ) | սվիտր | 14.06 | 4500 |
| | | | 4 արկղ 480 հատ) | մայկա | 3.6 | 1728 |

Այս բեռի ընդհանուր քաշն է 5800 (հինգ հազար ութ հարյուր) կգ, արժեքը՝ $ 78.100.00.00 (յոթանասունութ հազար հարյուր ԱՄՆ դոլար), ճանապարհածախսը կազմում է $ 5,950.00 (հինգ հազար ինն հարյուր հիսուն ԱՄՆ դոլար):

# ՄԱՍՆԱՑՈՒՑԱԿ

## Container MSCU 3418562

| Հ/Հ | Ապրանքի տեսակ | Արկղերի քանակ | Քանակ (1 արկղի մեջ) | Քանակ (ընդամենը) | Քաշը (կգ) | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | բրուտտո | նետտո |
| 1 | բաճկոն | 13 | 10 | 130 | 150 | 137 |
| 2 | տաբատ | 32 | 36 | 1152 | 900 | 868 |
| 3 | սվիտր | 30 | 32 | 960 | 700 | 670 |
| 4 | մայկա | 14 | 120 | 1680 | 300 | 286 |
| 5 | կիսաշրջազգեստ | 6 | 30 | 180 | 85 | 79 |
| 6 | պայուսակ | 5 | 30 | 150 | 65 | 60 |
| ընդամենը հագուստ | | 100 | --- | --- | 2200 | 2100 |
| 7 | անկողնային կտոր | 30 փաթեթ | 300 մետր | 9000 մետր (15000 $մ^2$) | 3000 | 2940 |
| 8 | կոշիկ | 3 | 18 | 54 | 30 | 25 |
| 9 | գուլպա | 8 | 100 | 800 | 70 | 62 |
| 10 | պահարան | 1 կտոր | 3 | 3 | 280 | 270 |
| 11 | մահճակալ մատրասով | 1 կտոր | 2 | 2 | 120 | 110 |
| 12 | կլոր սեղան | 1 կտոր | 1 | 1 | 100 | 95 |
| ընդամենը | | 144 | --- | --- | 5800 | 5602 |

Մասնացուցակը կազմեց ՆՀՎ Շիրակի բաժնի ավագ նաքսային տեսուչ Վ. Միրզոյանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-845-Ա**
**քաղ. Երևան**

**«ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 13-ի N 3/3.8-2/84441-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N ՀՔ/22/8258-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N ԱԱ/3-6/6525-11 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 14-ի N 101/104.3/4894-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Բավարիայի երկրամասի Կարմիր Խաչի կողմից Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված դեղորայքի, բժշկական պարագաների և այլ ապրանքների (14000 կգ ընդհանուր քաշով, 50000 եվրո ընդհանուր արժեքով, ներառյալ բեռնափոխադրման և այլ ծախսեր, «Գուգարք» տարածաշրջանային մաքսատուն, բաշխման ցանկը կցվում է) ներմուծման ծրագիրը:

2. Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Հաստատում եմ՝ Ստեփանավանի «Վերածնունդ» Բ/Հ*
*Հոգաբարձուների խորհրդի նախագահ*
*Ռ. Քոչարյան*

14/4.7

**Ց ՈՒ Ց Ա Կ**

Ստեփանավանի «Վերածնունդ» բարեգործական հիմնադրամի հասցեով ներմուծված ապրանքների բաշխման

| Անվանումը | Չափի միավոր | Քանակը | Արժեքը եվրո | Ստացող Կազմակերպությունների անվանումը |
|---|---|---|---|---|
| դեղորայք ըստ արտահանման երկրի մասնացուցակ «Aufstellung Medikamentenspende»-ի | արկղ | 298 | 20650 | «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ |
| Ներկ ջրային լուծույթում | դույլ | 90 մեծ<br>81 փոքր | 8400 | Ստեփանավանի քաղաքապետարան թիվ 2, 3, 4 մանկապարտեզներ, սպորտդպրոց, գրադարան |
| Երկանիվ հեծանիվ օգտագործած | հատ | 6 | 250 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններ<br>թիվ 1 մանկ. - 2 հատ<br>թիվ 2 մանկ. – 1 հատ<br>թիվ 3 մանկ. – 1 հատ<br>թիվ 4 մանկ. – 2 հատ |
| Հաշմանդամի սայլակ օգտագործած | հատ | 4 | 760 | Ստեփանավանի քաղաքապետարան, ըստ սոցիալական ծառայության տրված ցուցակի |
| Մեկ տեղանոց ներքնակ օգտագործած | հատ | 12 | 720 | Թիվ 1, 3 նախադպրոցական հաստատություններին<br>թիվ 1 մանկ. - 8 հատ<br>թիվ 3 մանկ. – 4 հատ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Հյութի ապակյա բաժակներ | տուփ | 43 | 810 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին<br>թիվ 1 մանկ. - 15 հատ<br>թիվ 2 մանկ. – 6 հատ<br>թիվ 3 մանկ. – 10 հատ<br>թիվ 4 մանկ. – 12 հատ |
| Թեյի կերամիկական բաժակներ | հատ | 360 | 280 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին<br>թիվ 1 մանկ. - 120 հատ<br>թիվ 2 մանկ. – 40 հատ<br>թիվ 3 մանկ. – 90 հատ<br>թիվ 4 մանկ. – 110 հատ |
| Խանձարուրներ հիվանդների համար | տուփ | 138 | 5400 | Ստեփանավանի քաղաքապետարան, ըստ պոլիկլինիկայի տրված ցուցակի |
| Պոլիմերային պարկեր աղբահանության համար | տուփ | 166 | 8150 | Ստեփանավանի քաղաքապետարան, շաբաթօրյակների միջոցով քաղաքի և համայնքի վարչական տարածքի հանգստյան գոտիների սան-մաքրման աշխատանքների նպատակով |
| Մակարոն | տուփ | 962 | 4580 | Ստեփանավանի 4 նախադպրոցական հաստատություններին<br>թիվ 1 մանկ. - 300<br>թիվ 2 մանկ. - 162<br>թիվ 3 մանկ. - 200<br>թիվ 4 մանկ. - 300 |

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 846 -Ա**
**քաղ. Երևան**

**ԱՄՆ-Ի ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 19-ի N 3/3.8-2/84789-1 ու 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N 3/3.8-2/85266-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N ԱԱ/3-6/6544-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից (ԱՄՆ, Գլենդել, Փասիֆիք պողոտա, N 1101) իր հայաստանյան ներկայացուցչության միջոցով (ՀՀ, քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053) իրականացվող՝ 219350.34 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իր հայաստանյան ներկայացուցչության հասցեով ուղարկված բեռը (150 տեղ, 8360 կգ ընդհանուր քաշով, 210800.34 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8050 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հան-



րապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արմեն Գյուլխասյանի կողմից

«28» սեպտեմբերի 2011

## Մարդասիրական օգնություն Հայաստանին

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից դոնորներից ստացված մարդասիրական օգնության հավաքագրում, առաքում Հայաստան, ստացում և համապատասխան ձևակերպումների իրականացում ու բաշխում շահառու կազմակերպություններին: Մարդասիրական օգնության նկարագրերն ըստ կազմակերպությունների նկարագրված են կից ներկայացված շահառուների բաշխման ցանկում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններ |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամ (1101 Ն. Փասիֆիք պողոտա, Գլենդել, Կալիֆորնիա 91203) |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամը՝ հայաստանյան ներկայացուցչության միջոցով (ք. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններ, սոցիալական, կրթության, իրավական, առողջապահության ոլորտներ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 219,350.34 ԱՄՆ դոլար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ստացող կազմակերպությունների ցանկը ներկայացվում է կից հավելվածով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի սեպտեմբերի 28-ից մինչև նոյեմբերի 15-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, | Բեռների ստացում, մաքսային ձևակերպում և բաշխում շահառու կազմակերպություններին 28 սեպտեմբերի 2011 մինչև 15 նոյեմբերի 2011 |



| | | |
|---|---|---|
| | անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 219,350.34 ԱՄՆ դոլար |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծվող ապրանքների ցանկը ներկայացվում է կից հավելվածով՝<br>8360 կիլոգրամ բեռ<br>210,800.34 ԱՄՆ դոլար<br>Տեղափոխում՝ 8,050.00 ԱՄՆ դոլար |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Աբովյանի մաքսային պահեստի ծախսեր՝ 500.00 ԱՄՆ դոլար, |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվելու ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամին և օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

## ՄՀՀ ծովային բեռ 195

# CARGO MANIFEST

## Շահառուների բաշխման ցանկ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ստացող՝
Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն
Ալեք Մանուկյան 9, 2-րդ հարկ
Երևան, 0070 Հայաստան
Հեռ.՝ 010-51-20-50
Բջջ.՝ 091-42-51-21
Պատասխանատու՝ Արմեն Գյուլխասյան

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Որբերի օգնության հայկական հասարակություն | Կրթական խաղեր և հագուստ | Սաջոյան, քույր Ա. Հայաստանի տիրամայր | Անարատ հղիության հայ քույրերի միաբանության տիրամայր Հայաստանի կուսաստան կազմակերպություն, Հասցե՝ ք. Գյումրի, Անի թաղամաս, Չարենց 6, ՀՎՀՀ 05513266 | Բարեգործական նպատակ՝ մանկատներին բաշխելու համար | Մանկատան երեխաներ՝ երեխաներին հատկացման նպատակով | 62 | | 877 | 398 | 10,650.00 |
| Հայ օգնության ֆոնդ | Համակարգիչ | Բագրատ Սարգսյան, ՀՕՖ | Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22, իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ 02517115 | Բեռը նախատեսված է ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակի համակարգչային ցանցի վերազինման համար | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ գրասենյակի համակարգչային ցանցի վերազինման համար | 2 | | 84 | 38 | 5,685.75 |
| Գուդշուզյան, դոկտոր Նիշան | Բժշկական պարագաներ | Կոլոյան Կարեն - Երեխաների վերածնունդ | Երեխաների Վերածնունդ, Վ.Վաղարշյան 24/3, բն 3, ՀՎՀՀ 00069638 | բժշկական սարքավորումներ և նյութեր, որոնք օգտագործվում են հիմնականում, Արաբկիր բժշկական կենտրոնում: | Արաբկիր բժշկական կենտրոն երեխաների անվճար բուժման նպատակով | 14 | | 390 | 177 | 5,240.00 |
| Հայ օգնության ֆոնդ | Մոնիտորներ | Բագրատ Սարգսյան, ՀՕՖ | Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22,իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22,ՀՎՀՀ 02517115 | Բեռը նախատեսված է ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակի համակարգչային ցանցի վերազինման համար | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ գրասենյակի համակարգչային ցանցի վերազինման համար | 2 | | 38 | 17 | 300.00 |



## ՄՀՀ ծովային բեռ 195

# CARGO MANIFEST

## Շահառուների բաշխման ցանկ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայ-ամերիկյան մշակութային ասոցիացիա | Տեղեկատվական թերթիկներ և պարագաներ | Հակոբյան Հ.Հայ-ամերիկյան առողջության կենտրոն | Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն Հիմնադրամ, ք. Երևան, Միխիթար Հերացու 5, ՀՎՀՀ 01541443 | Բեռի պարունակությունը նախատեսված է Կենտրոնի [illegible] ադմինիստրատիվ աշխատակիցների և բժիշկների համար՝ [illegible] գրանցման և ինֆորմացիայի պահպանման նպատակով: | Բեռի ստացման իրական շահառուն Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն Հիմնադրամն Կենտրոնի նպատակն է Հայաստանում և տարածաշրջանում պահպանել, բարելավել մարդկանց առողջությունը, զբաղվել կանխարգելիչ բժշկությամբ, իրականացնել կրծքագեղձի, արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման, ոսկորների խոռության ախտորոշմամբ կոտրվածքների կանխարգելման ծրագրեր, ինչպես նաև՝ նպաստել ընտանիքի առողջության պահպանմանը, առողջ ապրելակերպի քարոզչությանը, իրականացնել կրթական ծրագրեր: | 2 | | 72 | 33 | 1,129.00 |
| Ֆլեթչերի դիվանագիտական դպրոց | Կրթական նյութեր | Թրուզյան Սոնա, ՀՀ գլխավոր դատախազություն | ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5, 0010 | Բեռները նախատեսված են Դավիդյան հիմնադրամի ֆինանսավորմամբ ԱՄՆ-ի Թավթս համալսարանի Ֆլետչերի դպրոցում կազմակերպված ուսումնական ծրագրի 2011 թվականի մասնակիցների համար: Դրանց մեջ գրքեր են, որոնք մասնակիցները ուսումնասիրել են 2011 թվականի հունվար-հունիս ամիսներին նշված դպրոցում ուսումնառության ընթացքում: Հետևաբար բեռները տրամադրվելու են ծրագրի շրջանավարտներին: | Բեռները նախատեսված են Դավիդյան հիմնադրամի ֆինանսավորմամբ ԱՄՆ-ի Թավթս համալսարանի Ֆլետչերի դպրոցում կազմակերպված ուսումնական ծրագրի 2011 թվականի մասնակիցների համար: Դրանց մեջ գրքեր են, որոնք մասնակիցներն ուսումնասիրել են 2011 թվականի հունվար-հունիս ամիսներին նշված դպրոցում ուսումնառության ընթացքում: Հետևաբար բեռները տրամադրվելու են ծրագրի շրջանավարտներին: | 16 | | 530 | 240 | 11,236.99 |
| Ամերիկայի հայ ավետարանչական ասոցիացիա | Կաթի փոշի մանուկների համար | Լեոնյան Ռենե, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության | Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ, Բաղրամյան 18, իրավաբանական հասցե՝ Նիկոլ Դումանի 22, ՀՎՀՀ 00032803 | Բարեգործական բաշխման նպատակով՝ կարիքավոր ընտանիքներին | Ընկերակցության հովանու ներքո գտնվող կարիքավոր ընտանիքներ՝ անձնական օգտագործման նպատակով | | 12 | 9,734 | 4,415 | 27,720.00 |

# CARGO MANIFEST

## Շահառուների բաշխման ցանկ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հոլոջիք ինկ. | Բոն-Դենսիտոմետր սարք | Բագրատ Սարգսյան, ՀՕՖ | Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22, իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ 02517115 | Դենսիտոմետրիայի սարքավորումները Հոլոջիկ ընկերության և ամերիկահայ պրոֆեսոր Ջոն Բելեզիկյանի նվիրատվությունն է Էրեբունի բժշկական կենտրոնին, ՀՀ ԱՆ վնասվածքաբանության, օրթոպեդիայի գիտական կենտրոնին և ԼՂՀ առողջապահության նախարարությանը: | Դենսիտոմետրիայի սարքավորումները Հոլոջիկ ընկերության և ամերիկահայ պրոֆեսոր Ջոն Բելեզիկյանի նվիրատվությունն է Էրեբունի բժշկական կենտրոնին, ՀՀ ԱՆ վնասվածքաբանության, օրթոպեդիայի գիտական կենտրոնին և ԼՂՀ առողջապահության նախարարությանը: | | 4 | 4,447 | 2,017 | 120,000.00 |
| Հայկական միջազգային ակնաբուժական ասոցիացիա | Օպտիկական ոսպնյակներ և շրջանակներ | Մանթաշյան Ստեփան - AIOA Հայաստան | Հայկական միջազգային օֆթալմիկ միություն (ՀՄՕՄ), հայաստանյան մասնաճյուղ (ՀԱՄ) բարեգործական կազմակերպություն, [illegible] Երևան, Թամանյան 2 [illegible], ՀՎՀՀ 00849964 | Սկսած 2006 թվականից մարդասիրական օգնության ծրագրերի շրջանակներում [illegible] օպտիկական [illegible] շրջանակներ և [illegible] Հայաստանում [illegible] համար, [illegible] օպտիկական [illegible] համար: | Շահառուները Հայաստանի և Արցախի, տարբեր հասարակական կազմակերպությունների հոգատարության տակ եղած անապահով խավն է: | 23 | | 1,840 | 835 | 20,794.00 |
| Հայ-ամերիկյան մշակութային ասոցիացիա | Համակարգիչներ և մոնիտորներ | Հակոբյան Հ.Հայ-ամերիկյան առողջության կենտրոն | Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն Հիմնադրամ, ք. Երևան, Մխիթար Հերացու 5, ՀՎՀՀ 01541443 | [illegible] Կենտրոնի [illegible] ամենախտրատիվ աշխատակիցների և բժիշկների համար՝ այցելուների գրանցման և ինֆորմացիայի պահպանման նպատակով: | Բեռի ստացման իրական շահառուն Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն Հիմնադրամն Կենտրոնի նպատակն է Հայաստանում և տարածաշրջանում պահպանել, բարելավել մարդկանց առողջությունը, զբաղվել կանխարգելիչ բժշկությամբ, իրականացնել կրծքագեղձի, արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման, ոսկորների խտության ախտորոշմամբ կոտրվածքների կանխարգելման ծրագրեր, ինչպես նաև՝ նպաստել ընտանիքի առողջության պահպանմանը, առողջ ապրելակերպի քարոզչությանը, իրականացնել կրթական ծրագրեր: | 6 | | 190 | 86 | 4,810.00 |
| Գրեգորյան Վարդան (Նյու Յորք) | Գրքեր | Ավագյան Սաթենիկ, ՀԱՀ | Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ, Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող.40, ՀՎՀՀ 01511187, | Նվիրատվություն ուսանողության և հանրության օգտագործման նպատակով | Հայաստանի Ամերիկյան համալսարանի գրադարան, նվիրատվություն ուսանողության և հանրության օգտագործման համար | 2 | | 62 | 28 | 1,287.85 |



9/28/2011 03:05 PM

ՄՀՀ ծովային բեռ 195

CARGO MANIFEST

Շահառուների բաշխման ցանկ

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Գրեգորյան Վարդան (Նյու Յորք) | Գրքեր | Սարգսյան Դավիդ, ՀՀ ազգային գրադարան | Հայաստանի Ազգային գրադարան ՊՈԱԿ, Երևան 375009, Տերյան 72, ՀՎՀՀ 01506092 | Նպատակը՝ գրադարանային անվճար ծառայություններ մատուցելը, ընթերցողների տեղեկատվական պահանջները բավարարելը | Բեռի ստացման իրական շահառուն Հայաստանի Ազգային գրադարանն է, նվիրատվությունը կհամալրի Հայաստանի Ազգային գրադարանի ֆոնդերը | 5 | | 166 | 75 | 1,946.75 |
| | | Ընդհանուր | | | | 134 | 16 | 18,430 | 8,360 | 210,800.34 |



9/28/2011 03:05 PM

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ- 847 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԾԱԳ ԵՎ ՔԱՐԻՆՋ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 17-ի N 3/3.8-1/84726-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 01/5890-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 16-ի N ԱԱ/3-4/6568-11 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 20-ի N 101/108.3.4/5080-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1340000 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արևածագ և Քարինջ համայնքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

անհատ ձեռնարկատեր Արմեն Հասանյանի հետ (ՀՎՀՀ՝ 70924328) 2011 թվականի օգոստոսի 23-ին կնքված՝ N WVA/ALAV ADP/CM-11/002 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 1340000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական
Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի

Տնօրեն՝ Գրահամ Սթրոնգ

26 սեպտեմբեր, 2011թ.

«Շինարարական նյութերի մատակարարում Լոռու մարզի Արևածագ և Քարինջ համայնքներ»

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նպաստել համայքների երեխաների ուսումնառության և զարգացման գործընթացին՝ Լոռու մարզի Արևածագ և Քարինջ համայնքների դպրոցներին տրամադրելով շինարարական նյութեր՝ համապատասխանաբար Արևածագում դասասենյակներ վերանորոգելու և Քարինջում դպրոցի ջրի արտաքին համակարգը վերանորոգելու համար |
| 2. | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ<br>*Հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MSKI5, OZR, United Kingdom* |
| 4. | Ծրագիրը կատարողը | Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+37410749146* |

2

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լոռու մարզի Արևածագ, Քարինջ համայնքներ:<br><br>Բնագավառ՝ Կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ 1 340 000 (մեկ միլիոն երեք հարյուր քառասուն հազար) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ: Ֆինանսավորումը ստացվել է 2010թ.-ի հոկտեմբեր ամսին: Ծրագրի իրականացման համար հատկացված ֆոնդերը նախատեսվում է ծախսել մինչև 2011թ.-ի հոկտեմբերի 15-ը:<br>*(ՎՎՀ ֆինանսական տարի սկսվում է Հոկտեմբերի 1-ից)* |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լոռու մարզի Արևածագ և Քարինջ համայնքների դպրոցները : |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011թ.-ի օգոստոսի 23-ից հոկտեմբերի 15-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է շինարարական նյութերի մատակարարումն իրականացնել նշված համայնքներ մինչև 2011թ.-ի սեպտեմբերի 17-ը: Շինարարական նյութերի ընդհանուր արժեքը կազմում է՝ 1.340.000 դրամ: Շինարարական նյութերի բաշխումն ըստ համայնքների ներկայացված է ստորև.<br>1. Արևածագ համայնքի դպրոց՝ 1.084.000 (մեկ միլիոն ութսունչորս հազար) դրամ<br>2. Քարինջ համայնքի դպրոց՝ 256.000 (երկու հարյուր հիսունվեց հազար) դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել Արմեն Հասանյան ԱՁ-ի հետ (պայմանագրի և հավելվածների օրինակները կցվում են): Մատակարարվող շինարարական նյութերի ընդհանուր արժեքը կազմում է 1.340.000 (մեկ միլիոն երեք հարյուր քառասուն հազար) դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում Վորլդ Վիժն Հայաստան |

| | | |
|---|---|---|
| | կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | կազմակերպությունը համագործակցում է Արևածագ, Քարինջ համայնքների դպրոցների և նշված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի Վերահսկողությունը կիրականացվի ծրագրի ֆինանսավորող Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի կողմից ինչպես նաև «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» հայաստանյան մասնաճյուղի համայնքային կազմակերպիչները: Անմիջական վարչական և ծրագրային վերահսկողությունն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության համապատասխան բաժինների, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորլդ Վիժն Մեծ Բրիտանիայի գրասենյակի կողմից:<br><br>Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպությունն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: |

Վարազդատ Սարգսյան

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ Միջազգային Բարեգործական Կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի Ալավերդու տարածքային զարգացման ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**30 սեպտեմբերի 2011 թվականի N Մ-848-Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՌԻՃԱՎԱՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ 2-ՐԴ ՓՈՒԼԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 3/3.8-1/85028-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 27-ի N 6024-11, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N 01/13.2/4540-11, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N ԱԱ/3-4/6807-11 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 01/4644-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 269603270 դրամ արժողությամբ «Հառիճավանքի վերակառուցման 2-րդ փուլի շինարարական աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շիրակ Ինժեներինգ Քոնսթրաքշն» ՓԲԸ-ի (Կապալառու, ՀՎՀՀ՝ 05531764) և Հայկական բարեգործական ընդհանուր միության հետ (վճարող, ՀՎՀՀ՝ 00006479) 2011 թվականի օգոստոսի 23-ին կնքված՝ N 18Շ/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի Հառիճի վանական համալիրի նորոգման և վերակառուցման 2-րդ փուլով նախատեսված շինարարական աշխատանքների իրականացում՝ 269603270 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
